№ 191 Հոկտեմբերի 15 (27) 1881 Հոկտեմբերի 15 (27) № 191

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաբնակներից գրվում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զքաւոր աշակերտների մասին չենք հոգում։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Վերին-Ագուլիսից։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիւրքիա։ Ֆրանսիա։ Գամբէտտա և իշխան Բիսմարկ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑԻԱԲՈՏԱՒԹԻՒՆՆԵՐ

ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՉԵՆՔ ՀՈԳՈՒՄ

—

Օր չէ անցնում որ մեզ մօտ չը ներկայանային մեր քաղաքի այլ և այլ դպրոցների աշակերտներ, խնդրելով նիւթական օգնութիւն։ Մասնաւոր մարդու՝ այժից վեր է այդքան բազմութեան չքաւոր աշակերտներին օգնել։ Եւ ահա մենք կրկին և կրկին ստիպված ենք յիշեցնել Թիֆլիսի հասարակութեանը, առհասարակ, և մասնաւորապէս հայոց հասարակութեանը, որ անհրաժեշտ է հիմնել մի հաստատ, մշտական բարեգործական ընկերութիւն, որի նպատակը լինէր օգնութիւն հասցնել ուսում առնող չքաւոր աշակերտներին։

Շատ գովելի բան է, ի հարկէ, ժամանակ առ ժամանակ տալ կօնցերտներ կամ ներկայացումներ յօգուտ չքաւոր աշակերտների, բայց դա տևողական բան չէ։ Հարկաւոր է մի ընկերութիւն հաստատ դրամագլխով, որի տոկոսներով կը պահվի աղքատ աշակերտների յայտնի թիւը, համեմատ հիմնական գումարի մեծութեան։

Մեր բոլոր թէ պետական և թէ ազգային ու մասնաւոր դպրոցների չքաւոր աշակերտները ոչինչ հաստատ աղբիւր չունեն իրանց օրական հացը հայթայթելու։ Որքա՜ն որբ, անօգնական, անտէր տղաներ կան նրանց մէջ, մանաւանդ օտարաքաղաքացի աշակերտներից, որոնք ոչինչ ազգականութիւն չունեն Թիֆլիսում։ Բոլոր հասարակական կապերից զուրկ, նրանց ապրելու միակ միջոցը, իրանց ուսումը շարունակելու համար, մասնաւոր տների մէջ դասաւորութիւնն է։ Բայց վերջին ժամանակները մեր դպրոցների չքաւոր աշակերտները իրանց տարուստը պահպանելու համար անհրաժեշտ դասերն էլ չեն կարող ճարել։ Պատճառը շատ հասարակ է. մասնաւոր տների մէջ դասաւորութիւնը իրանց ձեռքը գցեցին աշակերտներից ամենաունևորները, որոնք Թիֆլիսում ունեն հասարակական և ազգականական մեծ կապեր, որոնք, չը նայելով որ այդպէս էլ ապահոված են նիւթական կողմից, տալիս են դասեր մասնաւոր տներում, որպէս զի ունենան աւելի փող իրանց ձեռքում, լաւ հագնվելու, թատրօն գնալու համար։

Աղքատ աշակերտների համար դասեր տալը ապրուստի անհրաժեշտ միջոց է, կեանքի միակ աղբիւր է,—իսկ նրանց ունևոր ընկերների համար շռայլութեանը բաւականութիւն տալու մի յանցաւոր պահանջ է։ Չքաւորները ոչինչ կապեր չունեն հասարակութեան մէջ, իսկ նրանց ունևոր ընկերները, օգուտ քաղելով իրանց կապերից, իրանց աջող դիրքից, բոլոր մասնաւոր դասերը իրանց ձեռքն են գցել։

Ուրեմն մեր հասարակութեան մէջ դեռ դպրոցից սկսած չը կայ ոչինչ համերաշխութիւն, ոչինչ ընկերակցութիւն ընկերների մէջ։ Ունևորները, այժ ունեցողները զրկում են իրանց ընկերներին մասնաւոր դասերից։ Փոխանակ, ընդհակառակն, որտեղ հարկաւոր է լինում մի տնային վարժապետ, իրանց չքաւոր ընկերոջ առաջարկելու,—ունևոր ընտանիքների որդիները մտածում են. «ի՞նչի պիտի նրան թողնեմ այդ դասը, երբ որ ամիսը մի քանի ռուբլ աւելի ունելով, ես կը կարողանամ ֆայետօնով մանգալ, թատրօն գնալ, աւելի լաւ հագնվել։»

Մի հարուստ գիմնազիստի համար ամսական մի աւելորդ տաս, տասն և հինգ ռուբլ՝ շռայլութիւն է, իսկ նոյն անուշան գումարը մի որբ, չքաւոր աշակերտի համար՝ կատարեալ ապահովութիւն է ամբողջ ամսվայ համար։ Մեծ օգնութիւն կը լինէր մեր դպրոցների չքաւոր աշակերտների համար, եթէ իւրաքանչիւր դպրոցի աշակերտների մէջ հաստատվէր համերաշխութիւն, եթէ ունևոր աշակերտները միշտ իրանց չքաւոր ընկերներին առաջարկէին մասնաւոր տներում դասատուութիւն անելու։

Բայց այդ բաւական չէ։ Հարկաւոր է վերջապէս մտածել մի հիմնաւոր բարեգործական ընկերութիւն հաստատելու վրա, որ, որքան հնար է, չունենար չափից դուրս լայն, ընդարձակ, երևակայական նպատակներ, այլ առժամանակ, համեստ, սահմանափակ դիտաւորութիւններ։

Առանց նիւթական օգնութեան մեր ուսում առնող չքաւոր երիտասարդութիւնը փչանում է, կորչում է, անհրաժեշտ ջանքեր անելով ուսում ստանալու, տարիների ընթացքում իւրաքանչիւր օր պատերազմելով կենսական ամենաանհրաժեշտ կարիքների դէմ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

—

Սեպտեմբերի 28-ին

Այս նամակով ուղարկում եմ ձեզ մի թերթիկ հին գրչագիր, որի երկրորդ երեսի վրա կը գտնէք երկու տող հայոց նշանագրերի օրինակներ։ Այդ թերթիկը ես վեր արայ մի հին գրչագիր աւետարանից, այժմ ուղարկում եմ ձեզ մեր հայ հնագէտներին ցոյց տալու, գուցէ դա մի փոքրիկ գաղափար կը տար մեր հին նշանագրերի մասին։

Նշանագրերի ներքև հայկական նոր տառերով գրված է՝ «Զաքարայ ծառայ սուրբ Գրիգոր Լուսաւորչին, սուրբ Յովանէս Մկրտչին»։ Իսկ այդ տողերի իւրաքանչիւր բառի վրա դրված են նրա համապատասխան նշանագրները։ Պէտք է նկատել, որ ամեն մի բառը ներկայացնում է մի առանձին տեսակ նշանագրեր։ «Զաքարայ» բառը սեպաձև տառերով է գրված. «ծառայ» բառը մի առանձին տեսակ սեպաձև է. իսկ «սուրբ» և «Գրիգոր» բառերը սեպաձևներ չեն, այլ մի այլ տեսակ նշանագրեր. «լուսաւորչին» բառը նոյնպէս մի այլ տեսակ սեպաձև է։ Անցեալ «սուրբ Յովանէս Մկրտչին» բառերը հայոց ծածկագրութեան օրինակներ են։ Մի խօսքով, այդ երկու տողը բաւական պարզ գաղափար է տալիս, թէ քանի տեսակ նշանագրեր էին գործածում մեր նախնիքը։

Թերթիկի առաջին երեսի վրա գրված յիշատակարանից երևում է, որ յիշեալ աւետարանը գրված է եղել Վանայ երկրի Աւանց *) գիւղում (այսինքն հայոց բևեռագրների հայրենիքում) հայոց ռ. խ. ը. (1048) թուականին, սուրբ Յովհաննէս Մկրտչի և սուրբ Գրիգոր լուսաւորչի վանքում։ Ուրեմն 283 տարի հնութիւն ունի։ Երևում է, որ 283 տարի առաջ հայոց հին բևեռագրները ոչ միայն ընթերցանելի էին մեր գրագէտներին, այլ մինչև անգամ գործածութեան մէջ էին։ Ինչու չը մտածել, Խորենացին, որ մի և նոյն երկրիցն էր, ծանօթ չէր բևեռագրների ընթերցմանը և իր պատմութիւնը գրելու ժամանակ օգուտ չը քաղեց նրանցից։

Թէ հայոց հին բևեռագրների ընթերցումը ծանօթ է եղել մեր նախնիքներին, մինչև անգամ երկու, երեք դար առաջ, դրա համար ուրիշ ապացոյցներ ես կան։ Մի պարոն ինձ խոստացել է տալ մի մագաղաթեայ թերթ, որ դուրս է բերել մի հին բառարանից, որի վրա գրված են բևեռագրների այբուբենարանի բացատրութիւնները։ Երբ ձեռք բերեմ, կուղարկեմ ձեզ։

Եղանակի վատութեան պատճառով երկու օր աւելի մնացի Ագուլիսում. այսօր դուրս եմ գընում դէպի Պարսկաստան։

Բաֆֆի

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

—

Հոկտեմբերի 4-ին

Այս տարի, զկնի աւարտման ամառվայ հարցաքննութեանց, Լազարեան ճեմարանիս կառավարիչ (դիրեկտօր) պարոն Դելեանով, իր ծերութեան պատճառով հրաժարական էր տուել, իսկ նրա տեղ նշանակվել և հաստատվել է, ինչպէս յիշված էր «Մշակ» լրագրի էջերում, ճեմարանի նախկին տեսուչ (ինսպեկտօր) պարոն Քանանեանց։ Այս պարոնը մտած չը մտած իր պաշտօնի մէջ, ամեն հին կանոնները ու կարգերը վերցրեց ու սկսեց զանազան բէֆօրմներ մտցնել ճեմարանի մէջ։ Պարոնի բէֆօրմների վրա աւելորդ եմ համարում խօսել, որովհետև չունեն ամենևին յիշելու արժանաւորութիւն. լաւ կը լինէր որ մեծապատիւ պարոնը բէֆօրմներով զբաղվելու ու պարապվելու տեղ հոգար աշակերտների առօրեայ պիտոյքները։ Ես իմ նամակումս չունեմ դիտաւորութիւն քննելու մեծապատիւ պարոնի բէֆօրմների արժանաւորութիւնը, հարկաւորութիւն էլ անգամ չը կայ. սակայն խորհուրդ կը տայինք զբաղվել նրանով, որ գլխաւորապէս՝ մանկահասակ աշակերտների ուտելիքներով, որպէս զի մանուկները ու պատանիները չը վնասվէին ու չը տկարանային չոր ու ցամաք խմորեղէն կերակուրներից։ Շատ սակաւ կը տեսնէք ճեմարանի մէջ առողջ ու գոյնով տղաներ. աշակերտների մեծ մասի դէմքերը գունատ, դեղնոտած են. սրա պատճառը, ի հարկէ, գլխաւորապէս ուտելիքն է և այն փչացած օդը, որ աշակերտները միշտ կը ներշնչեն դասարանների, ննջարանների և սեղանատան մէջ, իսկ մեծ դահլիճի օդը, որտեղ մանր աշակերտները կը խաղան, անտանելի է, փոչին այն աստիճան լցվում է դահլիճի մէջ, որ անկարելի է անցկենալ այդ տեղից առանց խեղդվելու։ Կարծեմ սրա առաջը առնելու է թէյը նմանապէս, որ կը տան աշակերտներին առաւօտ և երեկոյ, լաւ էր որ ամենևին չը տային, այն աստիճան անհամ ու պղտոր է։ Չը գիտեմ, արդեօք ինչ է պատճառը, որ պարոն Քանանեանցը այդ ամենը մոռացման է տալիս և ուրիշ անուշան բաներով է զբաղված. կարծեմ որ մեծապատիւ ուսեալ պարոնը համոզված է, որ «sana mens in sano corpore», ուրեմն չէ կարելի միայն և եթէ զօրել ու հետևել ուսմանը։ Հրաւիրում ենք ազնիւ պարոնի ուշադրութիւնը այդ բանի վրա. մեծայոյս ենք որ մեր սուածը չի լինի «ձայն բարբառոյ յանապատի»։

Ցեսչի տեղ դեռ հաստատապէս չէ նշանակված ոչ օր, ուստի առ այժմ վարում է տեսչի պաշտօնը վարժապետներից մէկը. քանի մի աղբիւրներից լսած ենք, որ նշանակվելու է հայազգի պրոֆէսօր պարոն Ներսիսեանը։ Ցանկալի է որ այդ բանը իրագործվի։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 12 հոկտեմբերի

«Մշակ» ազգային լրագրիդ նախորդ համարներից միոյն մէջ՝ պատիւ ունեցայ կարդալ՝ ձեր այն թանգագին առաջարկութիւնը, որ բացարձակապէս երախտապարտ էր կացուցանում ինձ՝ Ամենայ աւետարանների լուսագիր պատկերացս հրատարակութեան համար, ձեր լրագրի միջոցաւը ստորագրութիւն բանալով։ Սոյն առթիւ անկեղծ զգացմամբ կը փութամ մատուցանել ձեզ իմ յարգալից շնորհակալութիւնը՝ ձեր ազնիւ պաշտպանութեան մասին։

Արդարև հայրենի աւետարաց այս նուիրական և սուրբ նշխարաց տեսարանները, պէտք էր փոքր ի շատէ ամեն բարեկիրթ ազգայնի համար՝ գրաւիչ և հրապուրիչ լիներ և ազգայնութեան եթէ ոչ ամբողջութիւնը, գոնէ զարգացեալ և ուսեալ դասը պէտք էր միաբերան յարգեր, գընահատէր և ջանար գնահատել տալ այլոց. բայց ոչ, ցաւօք սրտի, այնպիսի յարգելի անձեաւորութեանց հագիւ երեքին պատահեցայ։ Եւ արդ համոզված եմ, որ սամուելի միջոցաւ թերևս կարելի լինի սոյն գործի վրա, ազգայնոց լուրջ ուշադրութիւնն՝ և հետաքրքրութիւնը հրաւիրել, որոյ համար՝ անզօր և անլեզու եղան, թէ տարիներով անընդհատ մեծ ծախքերս՝ և թէ սիրտ մաշող աւերակաց՝ մաղձոտ ամայութեան մէջ, առողջութիւն թիւնաւորող դառն աշխատութիւններս։

Այո, վստահ եմ ձեր ազնիւ պաշտպանութեան, և եռանդուն տնօրէնութեանը և մանաւանդ թէ՝ յուսադիր եմ հայոց դէպի ձեզ ունեցած այն համակրութեանը, որ կարողացել էք ձեր անձնուէր և ազգօգուտ աշխատութեամբը գրաւել։ Ուստի գործիս յաջողութեանը անկրկայ եմ. ոչ այնքան ինձ, որքան անչէջ պահելու համար մեր նախնեաց չիջնալ հանճարն ու ճարտարութիւնը, որք թէպէտ լուռ և անձայն, սակայն միշտ բարձրաձայն վեհ և ճարտար խօսեն մեր սրտերի հետ՝ և որք ի շնորհս մեր անվայել անտարբերութեան, օր աւուր տապալին և անհետանան, որպէս թէ երբէք եղած չը լինէին։

Մինչ արդ՝ իմ անզօր ջանքս էր այդ աւերակների գոնէ արժանաւորագունից՝ մի քանիսին յիշատակները՝ անչնջելի պահել լուսատիպ պատկերներով և միանգամայն գիտնականաց ուսումնասիրութեան, և ազգային կրթութեան ու քաղցր յիշատակաց նիւթ մատակարարել։

Ահա այս սիրալիր նպատակաւ վառված աշխատեցայ, քանի որ դեռ չէին սպառած գրական միջոցներս. և դարձեալ այսուհետև՝ փափագելի է ինձ նոյն և նման աւերակաց աշխարհին մէջ դեգերել. եթէ ի շնորհս ձեր՝ և ազգային անհատների խնամօք, տարածվին հայոց հին մայրաքաղաքի աւերակաց տեսարանացոյց պատկերների փոքրաթիւ հաւաքածոյքը։ Յայնժամ՝ առիթ շնորհված կը լինի ինձ՝ նորանոր հայրենախոյզ ճանապարհորդութեանց, որ կենացս սիրելի զբաղմունքն ու հոգը եղած է՝ և պիտի լինի միշտ։

Յ. Քիւրքճեան

*) Աւանց գիւղը գտնվում է Վանայ լճակի ափին, Վան քաղաքից 20 վերստ հեռաւորութեան վրա և լճակի նաւահանգիստն է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեր աշխատակից պ. Բաֆֆի իր ճանապարհորդութեան ժամանակ գտել է մի գրչագիր աւետարանի մէջ հայոց հին բեռեռագրերի մի քանի օրինակներ, որոնց ընթերցանութեան եղանակը հայոց մեսրոպեան տառերով գրված է նոյն իսկ բեռեռագիր տողերի տակ։ Պարոնը ուղարկել է մեզ իր գիւտը Թիֆլիսի հնագիտական ժողովին ներկայացնելու համար, բայց դժբաղդաբար ժողովը արդէն վերջացած էր և հնագէտները գընացած էին, երբ մեր աշխատակցի նամակը ստացանք։

—

Երկու օր առաջ հրատարակվեցաւ Թիֆլիսում ռուսաց «Вѣстникъ Кавказа» լրագրի մի համար, հրատարակութեան իրաւունքը չը կորցնելու համար։

—

ԽԱՐԿՕՎԻՑ պ. բժշկապետ և պրոֆէսօր Շելթեանց ուղարկում է մեզ հետեւալ մի քանի տողերը, որ խնդրում է մեզ տպագրել մեր լրագրի մէջ. «Քանիցս պատահեցաւ որ Խարկով եկող հայերը, չը գիտենալով իմ հասցէս, հարկադրված եղան դիմել ուրիշ բժշկներին։ Այս պատճառով պատիւ ունեմ խնդրել ձեզ տպել ձեր պատուելի լրագրի մէջ իմ հասցէս, որ հետեւեալն է. Харьковъ, Театральная площадь, домъ Янковича.»

—

Ստացանք ՇԱՄԱԽՈՒՑ պ. Սարգիս Համբարձումեանցից 15 բուբլի, բաժանորդագրին «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար, Շամախու մի քանի հայ-աւետարանականներից։

—

Ստացանք ԱՍՏՐԱԽԱՆԻՑ 8 բուբլի բաժանորդագրին «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի հետեւեալ անձինքներից. Յովհ. Սօբոլեանց, Ստեփաննոս Նազարեանց, Գրիգոր Ակուլեանց, Գէորգ Սօբոլեանց, օր. Հռիփսիմէ Սօբոլեանց, Խաչատուր Միրմանեանց, Գրիգոր Միսնիկեանց և Խաչատուր Ֆաբրիկանտեանց։ Առաջվայ բաժանորդական փողերի հետ կանի 983 բուբլ 13 կոպ.։

—

ՂԶԼԱՐԻՑ հետեւեալ բաժանորդներ են գրվել «Ժուրնալ դ'Օրիան» լրագրին, ուղարկելով մեզ 17 բուբլ։ Թ. Կաճկաճեանց, Ա. Կաճկաճեանց, Ն. Անանեանց, Մ. Անանեանց, Ռ. Միշվելեանց, Ադամ վարդապետ, Ն. Թաւարբէգեանց, Յ. Աստուածատուրեանց, Խ. Ղարդանեանց, Ա. Թանդոյեանց, Գ. Առաքելեանց, Մ. Թումանեանց։ Առաջվայ փողերի հետ կանի 1000 ր. 13 կոպ.։

—

Մինչև այժմ պ. Քիւրքճեանի ֆոտոգրաֆիական ժողովածուին գրվեցին «Մշակի» խմբագրութեան մէջ երեք անձինք. Իստամանեանց և երկու եղբայրներ Արծրունի։

—

Երեքշաբթի օր, 20-ին հոկտեմբերի Թիֆլիսի ժողովարանում լինելու է կօնցէրտ յօգուտ չքաւոր գիմնազիստների։ Կօնցէրտին կը մասնակցեն պ. պ. Ալիխանով, Կորգանով, Օպոչինին, Ադամեան, և տիկիններ Իվանովսկի, Շեդլովսկի և օր. Գարագաշեան։

—

Կիրակի, հոկտեմբերի 11-ին առաւօտեան ժամ. 11-ին պատարագից յետոյ Հաւլաբարի Ս. Մարիամեան օրիորդական դպրոցը կատարեց իր գոյութեան տասն և միամեայ տարեդարձի հանդէսը։ Ներկայ էին այդ հանդէսին ի միջի այլոց քաղաքագլուխ պ. Մատինով, պ. բժշկապետ Միքայէլ Շահ-Պարոնեանց, պ. Իւղբաշեանց և մեծ բազմութիւն, մանաւանդ կանանց սեռի։ Գ. Կ. Թէմուրազեանց, որպէս ներկայացուցիչ դպրոցի կարգաց դպրոցի ուսումնական հաշիւը անցեալ ուսումնական տարվայ և մի զաղափար տուեց դպրոցի ներկայ դրութեան մասին, որից երևեցաւ, որ դպրոցը ներկայումս արդէն երեք դասատուն ունի 73 աշակերտուհիներով և եօթ գործող անձինքներով։ Պարոնը վերջացրեց իր ճառը ուրախութիւն յայտնելով որ ինքն, բնիկ հաւլաբարցի լինելով և գլխաւորապէս Հաւլաբարում գործելով, վերջին երկու, երեք տարիներում նկատում է Թիֆլիսի այդ քաղաքամասի մէջ մի նշանաւոր բարոյական և մտաւոր շարժում, նկատում է ինքնաճանաչութեան և ինքնագիտակցութեան հաստատ նշոյլներ։ Արժ. տէր Յովհաննէս Մարտիրոսեան, որպէս դանձապահ, ներկայացրեց անցեալ տարվայ ելումտից հաշիւը, որից երևեցաւ որ դպրոցի գանձարանը, մի աննշան տարբերութիւն է ունեցել ծախսի և մուտքի մէջ, այն է 6 բուբլ և մի քանի կօպէկ։ Դպրոցի վարչութեան կողմից իր հիմնադիր խորէն վարդապետ Ստեփանէին ուղարկված հեռագրին, այդ վերջինը պատասխանել էր հետեւեալ հեռագրով։ «Շնորհաւորում եմ և ցնծում եմ. թող երկնային Ուսուցիչը օրհնէ բոլոր աշակերտուհիներին և դպրոցի բոլոր բարեկամներին յաջողութեամբ շարունակելու այդ ամենավսեմ գործը։ Աստուած կը յիշէ այն ազնիւ մշակներին, որոնք հոգում են իրանցից փոքրերի վրա։ Աղօթում եմ Աստուծուն, որ ձեր ձեռքով դաստիարակված հայ օրիորդները ապրեն ընտանիքում այնպէս, ինչպէս սիրտը կըրծքում։ Յիշեցէք որ ամենարարձր արժանաւորութիւնը բաղդաւոր քրոջ համար պէտք է լինի չը մոռանալ իր աղքատ և հիւանդ քրոջը։» Հանդէսը վերջացաւ աշակերտուհիների ձեռագործների վիճակախաղով, որից գոյացաւ մօտ 163 բուբլ գումար։

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են։ «Մեզանում այգեքաղը վերջացաւ բաւական լաւ։ Բայց ոչովհետև մեր նահապետական ձեով առուտուր անող վաճառականները իրանց յիմարութիւնից այս տարի Նիժնի-Նովգորոդի տօնավաճառում իրանց սպասած օգուտը չեն ստացել, ուստի ուզումն Նրանով իրանց վարձատրել, որ խեղդում են խեղճ այգեստէրերին և գինու գինը այնքան ցած է, որ հազիւ թէ խեղճ այգեստէրերը կը հանեն իրանց ծախսած փողը։»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ մեր թղթակիցը գրում է մեզ։ «Վերջին օրերս մանկանց տարափոխիկ հիւանդութիւնը, որի մասին գրած եմ ձեզ արդէն, կարծես աւելի էլ սաստկանում է։ Առաւօտից մինչև երեկոյ եկեղեցու զանգակը իր տխուր ձայնը հնչեցնում է և վհատեցնում է կենդանի մընացած մարդկանց։ Հետեւեալ թիւերը ցոյց կը տան իմ ասածիս ճշմարտութիւնը։ Օգոստոս ամսին մեռած են 12 մանուկներ, սեպտեմբեր ամսին քսան հոգի, իսկ հոկտեմբերի 1-ից մինչև այսօր, այսինքն տասն օրվայ ընթացքում մեռել են 17 մանուկներ։ Այս համեմատութեամբ, ուրեմն, այս ամիսը կարող են 51 մանուկներ վախճանվել։ Գրէթէ մի տուն չը կայ, որի մէջ գոնէ մի հիւանդ մանուկ չը լինի։ Այդ տեսնվում է և տեղիս ազգային ուսումնարաններում։ Վերառնենք արական դպրոցը. ստորին պատրաստական ուսումնարանի 53 աշակերտներից 12 հոգի հիւանդ են, միջին պատրաստականի 55 աշակերտից 4 հիւանդ են, միայն առաջինում հիւանդ չը կայ։»

—

Պ. Սարգսեանց, Մոսկվայից, խնդրում է մեզ տպել հետեւեալ նամակը։ «Թոյլ տուէք, պ. խմբագիր, ձեր պատուական լրագրի միջոցով հրատարակել, որ 100 օրինակ պ. Շահազիզեանի շարադրութեան «Հրապարակախօս ձայն» ես իմ կողմից ձրիաբար ընծայում եմ հայոց դպրոցներին և մատենադարաններին։ Ցանկացողները կարող են ստանալ երկու և աւելի օրինակ մեր կօնտօրայից, Մոսկվայում, հետեւեալ հասցէով։ «Въ Бакинскій торговый домъ Тагіева и бр. Саркисовыхъ, Москва, на Мясницкой.»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

«Times» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են հետեւեալը։ Ռուսաց Ֆինանսների մինիստրութեան բարձր պաշտօնեաներից մէկի գալը, երևի, կը շտապցնի ֆինանսական բանակցութիւնների ընթացքը Բ. Դրան հետ։ Ռուսաց դեսպան պ. Նօվիկօվ, խիստ խօսքերով պահանջեց անյապաղ պատասխան տալ իր գրութեանը, և Բ. Դուռը չը գիտէ թէ ինչպէս դուրս գայ այդ դժուար դրութիւնից, որը ինքն ստեղծեց հոկտեմբերի 3-ի իր գրութեամբ։ Հաշուելով այդ գրութեան մէջ այն եկամուտները, որ նա կարող է տալ իր պարտատէրերին, և յայտնելով որ Ռուսաստանին զինուորական կօնտրիբուցիայի վճարելը կը մտնի այդ հաշիւի մէջ, Բ. Դուռը չէ կարող մերժել պ. Նօվիկօվի պահանջները, որ վերոյիշեալ եկամուտներից մի քանիսը որոշվեն մասնաւորապէս կօնտրիբուցիան վճարելու համար։ Անուղղակի հարկերը և Արևելեան Ռումելիայից ստացած եկամուտի աւելորդը առաջարկված են թիւրքաց օբլիգացիաների տէրերին բաւականացնելու համար։ Կիպրոս կղզուց ստացած եկամուտի աւելորդը անգլիական կառավարութիւնն է վերցրել, նշանակում է, Ռուսաստանին բաւականացնելու համար բոլգարական հարկն է մնում։ Ռուսաց կառավարութիւնը հաստատում է, որ եկամուտի այդ աղբիւրը, որը մինչև պատերազմը գոյութիւն չունէր, չէ կարելի թիւրքաց պարտատէրերին բաւականացնելու համար գործադրել։ Ռուսաստանը, երևի կը համաձայնվէր ընդունել բոլգարական հարկը գոնէ կօնտրիբուցիայի մէկ մասը ստանալու համար, բայց բանը նրանումն է, որ հէնց այդ հարկը թիւրքիան չէր կամենայ ռուսներին յանձնել։ Ճշմարիտ է, նա կարող էր կօնտրիբուցիան վճարելու համար իր ուրիշ եկամուտներից մէկը տալ, բայց դա հոկտեմբերի գրութեանը հակառակ կը լինէր, իսկ սուլթանը վախենում է յետ կանգնել իր այդ գրութիւնից իր ուրիշ պարտատէրերին չը քաջալերելու համար նոր պահանջներ անելու։ Դժուար է նախագուշակել, թէ ինչպէս Բ. Դուռը կը դուրս գայ այդ դժուարութիւններից։ Ռուսաց գրութեան առաջին մասում բոլգարական հարկի վրա ցոյց է տուած, որպէս եկամուտի այնպիսի աղբիւրի վրա, որը Բ. Դուռը իրաւունք չունի գրաւ դնել իր պարտատէրերի մօտ։

—

ՖՐԱՆՍԻԱ

—

Գրեվի, որ հրաժարել էր իր մօտ Գամբետտային, վերջինի այցելութեան ժամանակ խօսեց նրա հետ ընդհանրապէս քաղաքական գործերի դրութեան մասին։ Այդ խօսակցութեան ժամանակ Գամբետտա կարծիք յայտնեց, որ աւելորդ է այժմ զբաղվել նոր մինիստրութեան կազմելով, քանի օր այժմեան մինիստրութիւնը հրաժարական չէ տուել և ազգային ժողովներն էլ չեն գումարվել։ Հարկաւոր է սպասել, որ պատգամաւորների ժողովը քննէ այժմեան մինիստրութեան գործունէութիւնը, յայտնէ նրան իր հաւանութիւնը կամ դժգոհութիւնը և այնուհետև կազմել նոր մինիստրութիւն։ Գրեվի, Գամբետտայի կարծիքը իմանալուց յետոյ, չը յանձնեց նրան նոր մինիստրութեան կազմելը, այլ պայմանաւորվեց նոր տեսութեան մասին պատգամաւորների ժողովի գումարվելուց յետոյ։

Գրեվիի „La Paix“ լրագիրը առաջարկում է Գամբետտային ամբողջ կեանքի համար սենատոր նշանակել և յանձնել նրան մինիստր-նախագահի պաշտօնը, եթէ պատգամաւորների ժողովը չը վաւերացնէ նրա ընտրութիւնը։ Հաւատացնում են, որ Գրեվի առաջ էլ հակված է եղել յանձնել Գամբետտային ներքին գործերի մինիստրութիւնը, միայն թէ որքան կարելի է նա հեռու մնար արտաքին գործերին միջամտելուց։ Այդպիսի առաջարկութիւն մինչև անգամ չէ արված Գամբետտային, որովհետև դա հակառակ է նրա օրինաւոր ինքնասիրութեանը։

Հոկտեմբերի 11-ին կայացաւ Ֆրանսիական մինիստրների խորհուրդը, որի ժամանակ գեներալ Ֆարը կարդաց իր զեկուցումը հիւսիսային Աֆրիկայի գործերի դրութեան մասին։ Այդ զեկուցումից երևում է, որ արշաւանքը Կերուանի վրա յետաձգված է։ Բարտելեմի Սենտ-Իլեր հաղորդեց, որ մի քանի ֆրանսիական և անգլիական զրահակիր նաւեր ուղարկված են Եգիպտոս և դրա պատճառն այն է, որ Բ. Դուռը ուղարկել է Եգիպտոս իր հաւատարմատարին։ Եթէ վերջիններս յետ կը կանչվեն, այդ նաւերը չեն երևայ Ալէքսանդրիայի առաջ։ Առևտրական մինիստրի զեկուցման համեմատ բանակցութիւնները Անգլիայի հետ առևտրական նոր դաշնագրի մասին կարող են ցանկալի նպատակին հասցնել։

—

ԳԱՄԲԵՏՏԱ ԵՒ ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿ

—

Փարիզում նորերումս լուր տարածվեցաւ, որ Գամբետտա գաղտնի ուղևորվել է Գերմանիա իշխան Բիսմարկի հետ տեսնվելու համար։ Այդ առիթով «Times» լրագրի Փարիզի թղթակիցը հաղորդում է հետեւեալը։ „1878 թուականի յուլիսին ես մի երկար խօսակցութիւն ունէի իշխան Բիսմարկի հետ, որ այդ օրը շատ լաւ էր տրամադրված և երկար խօսում էր։ Մեր խօսակցութիւնը կատարվում էր գերմանական դեսպան իշխան Հօհենլօէի և բարօն Հոլշտէյնի ներկայութեամբ, որ վայելում էր Բիսմարկի կատարեալ հաւատարմութիւնը և, իբրև Փարիզի գերմանական դեսպանատան քարտուղար, շատ լաւ ծանօթ էր Ֆրանսիական քաղաքական գործերի դրութեան հետ։ Իշխան Բիսմարկ խօսում էր զանազան առարկաների մասին. կօնգրեսի, պատերազմի, Ֆրանսիական քաղաքական գործիչների մասին և այլն։ Այդ ժամանակ մէկը Գամբետտայի անունը յիշեց։ „Գամբետտա, բացականչեց իշխանը, ա՛յս մի մարդ, որին ես կուզենայի տեսնել իմ մահուանից առաջ։ Ինչ ուզում են ասեն, բայց նա երևելի մարդ է։ Նա իր բոլոր հայրենակիցներից բարձր է։ Ասում են, որ նա շատ գրաւիչ մարդ է, մի և նոյն ժամանակ ամենքը համոզված են, որ գրաւիչ մարդիկ չեն կարող պետական երևելի գործիչներ լինել։“—Թիւրը ինձ ասաց մի ժամանակ, ընդմիջեցի ես, որ դուք չափազանց գրաւիչ մարդ էք, բայց այնու ամենայնիւ դուք յայտնի էք իբրև երևելի քաղաքական գործիչ։—Հազիւ թէ ինձ գրաւիչ համարեն Գերմանիայի մէջ, պատասխանեց Բիսմարկը և աւելացրեց, այո, ես չէի կամենայ մեռնել Գամբետտային տեսնելուց առաջ։ Այդ խօսակցութիւնից յետոյ, երբ ես մնացի իշխան Հօհենլօէի և բարօն Հոլշտէյնի հետ, ես մտածեցի, որ իշխանի ասածները Գամբետտայի մասին պատահմունք չէին։ Ես նրանց յայտնեցի իմ միտքը։—Կարծեմ, նկատեցի ես, որ իշխանի երկու անգամ կրկնած ցանկութիւնը Գամբետտային տեսնելու մասին հասարակ պատահմունք չէր։ Իշխանը գիտէ, որ ես ծանօթ եմ Գամբետտայի հետ և որ Փարիզ վերադառնալուց յետոյ ես նրա հետ կը տեսնվեմ։ Նա չը խնդրեց չը պատմել Գամբետտային իր ասածները նրա մասին և կարծես նա ցանկանում է, որ ես բոլորը հաղորդեմ Գամբետտային։ Դուք ինձանից լաւ էք ճանաչում կանցլերին, ի՞նչ էք կարծում, արդեօք հարկաւոր չէ նրա և Գամբետտայի մէջ մի տեսակցութիւն կայացնել։ Ես կը նախապատրաստեմ տեսութիւնը, իսկ դուք բանակցութիւնները կատարեցէք“։ Իշխան Հօհենլօէ և բարօն Հոլշտէյն համաձայնեցին ինձ հետ և մենք պատրաստվում էինք գործողութեան նախագիծը կազմել։ Միւս օրը ես այցելեցի բարօն Հոլշտէյնին, հաւատացած լինելով, որ նա արդէն տեսնվել